— Հայրս պատոիրել է ինձ, երբ գիշերով հեռու տեղ ես գնում, պէտք է միշտ զէնք ունենաս:

Ճանապարհին ես Մարօից հարցրի, թէ որպէ՞ս նա կարողացաւ ճանաչել ծպտեալ «ճգնաւորին»:

— Սկզբում ես չկարողացայ ճանաչել, երբ տեսայ նրան «Կաթնաղբիւրի» ձորում, — պատասխանեց նա: — Թշոառականը մի այնպիսի մօրուք եւ ծամեր էր շինել, որ ինքը սատանան չէր կարող հնարել, երբ կամենում է ծերի կերպարանք ընդունել: Երեսը ներկել էր եւ պառաւի գոյն էր տոել, մինչեւ անգամ խորշումներ կային: Բայց աչքերը մնացել էին անփոփոխ: Ո՞վ չէ կարող ճանաչել Ասլանի գեղեցիկ աչքերը, եթէ մի անգամ տեսել է նրան:

— Բայց ո՞ր դեւը բերեց քեզ այնտեղ, «Կաթնաղբիւրի» ձորում:

Մարօն բոլորովին անկեղծաբար խոստովանեց, թէ նա հէնց այնօր տիրամօր տաճարի մէջ նկատել էր, երբ Սօնան մօտեցաւ եւ շշնջաց իմ ականջիս, նշանակելով տեսութիւն «Կաթնաղբիւրի» ձորում. թէ այն շշունջը ծնուցել էր նրա սրտում կասկած եւ նախանձ... եւ ինքը չկարողացաւ համբերել, եկաւ այնտեղ...

— Եւ քո կասկածանքը փարատոեցաւ՞, — հարցրի ես, երբ նա վերջացրուց իր խօսքը:

— Դեռ ոչ բոլորովին...: Բայց ինձ համար միեւնոյն է...: Սօնան լաւ աղջիկ է... ես սիրում եմ նրան... դու էլ պէտք է սիրես...

Այս խօսքերը Մարօն արտասանեց կտրատելով, կարծես, նրա լեզուն այրում էին: Բայց նա մեղաւոր չէր, նախանձը տիրում է բոլոր կենդանիների սրտին, որոնց մէջ զգացմունք կայ:

Հեռոից այժմ աւելի պարզ լսելի եղաւ «ճգնաւորի» երգի ձայնը :

— Այս կողմով գնանք, — ասաց Մարօն, նրան կը գտնենք այն լեռների մէջ:

ԼԹ. ԾԱԾԿԱՄԻՏ ԱՍԼԱՆԸ ԲԱՑԻՈՒՄ Է

Մենք գտանք «ճգնաւորին» վանքից բաւականին հեռու, լեռների մէջ, որ մօտ էին ծովեզրին: Նա նստած էր մի քարանձաւի մէջ, որի մուտքը նայում էր դէպի Լիմ անապատը: Լուսաւորուած լուսնի արծաթափայլ շողքերով, այդ փոքրիկ կղզին երեւում էր ծովակի մէջ մի մռայլ բծի նման: Քարանձաւը, որի մէջ գտանք «ճգնաւորին», մի հին միայնակեացի բնակարան էր, որի յատակի վրայ դեռ մնացած փոսիկների մասին տակաւին կային կենդանի